



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA (EASTERN)
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՍԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 4672

Յուլիս 23, 2002

Ամենապատիւ

Տ. Թորգոմ Արք. Մանուկեան

Պատրիարք Երուսաղէմի Առաքելական Աթոռի
Երուսաղէմ

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայր.

Ինչպէս հեռաձայնային խօսակցութեան ընթացքին տեղեկացուցի՝ վախճանեալ Տ. Հմայեակ Եպս. Ինդդեանի Տան Կարգը, Վերջին Օծումն ու Թաղման կարգը տեղի պիտի ունենան Յուլիս 26 եւ 27 օրերուն՝ Հալիվուտի (Ֆլորիտա) Ս. Մարիամ Աստուածածին Եկեղեցոյ մէջ: Վերջին Օծումը պիտի կատարէ Գերշ. Տ. Անանիա Արք. Արապաճեան:

Վախճանեալ Սրբազան Հօր կտակին համաձայն՝ անոր աճիւնները պիտի փոխադրուին Երուսաղէմ: Հաճեցէք կցեալ գտնել օրինակը Տ. Հմայեակ Եպս. Ինդդեանի կտակին:

Աղօթելով Ձեր առաւել քաջառողջ եւ երկար կեանքին համար,

Կը մատչիմ ի համբոյր Ձերդ Ամենապատուութեան Օծեալ Աջոյն
Խոնարհաբար՝

Խաժակ Արք. Պարսամեան

Խաժակ Արք. Պարսամեան
Առաջնորդ



ՀՄԱՅԵԱԿ ԵՊՍ. ԻՆԴՈՅԵԱՆ
(1908-2002)



ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ ՆԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

N°

Թուական
Date

29 Յուլիս 2002

ԾԱՆՈԹՅՈՒՄ

† † †

Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը ցաւով կը յայտնէ վախճանումը Սրբաց Յակոբեանց Միաբանութեան տարեց անդամներէն

ԳԵՐՇ. Տ. ՀՄԱՅԵԱԿ ԵՊՍ. ԻՆԴՈՅԵԱՆԻ

Ծննալ 1908ին, յԱպոդնակ (Գղի), եւ վախճանած Ամերիկայի Ֆլորիտա Նահանգի Մայեամի քաղաքին մէջ:

Թաղման Կարգը կատարուած է 27 Յուլիս 2002ին, Մայեամիի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Սրբոց Յակոբեանց Տանարին մէջ Հոգեհանգստեան Պաշտօն պիտի կատարենք 3 Օգոստոս 2002ին, Շաբաթ առաւօտեան Ժամը 9ին:

«Յիշեա՛, Տէր, զհոգի ծառայի եւ պաշտօնէի Եկեղեցւոյ Քոյ սրբոյ, ի լոյս երեսաց Քոց:»

Ղիւան Ս. Աթոռոյ



ՓՈՍՏԱՐԿՂ 14235
P.O.BOX 14235

ՀԵՌԱՉԱՅՆ 6264866
PHONE : 6264866

ՖԱՔՍ 6264862
FAX : 6264862

ԵՐՈՒՍԱԼԷՄ ԻՍՐԱԵԼ
JERUSALEM ISRAEL



ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ ՆԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

N°

Թուական
Date

26 Յուլիս 2002

Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց
Միաբանութեան Միաբանակից Եղբայրներուն

Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմի Առաջնորդ, Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան, ցաւօք սրտի մեզ հաղորդեց վախճանումը Միաբանութեանս անդամներէն Գերշ. Տ. Հմայեակ Եպս. Ինդոյեանի, որ Մայեամի Ֆլօրիտա կը բնակէր: Թաղման Կարգը Մայեամիի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ պիտի կատարուի Շաբաթ, 27 Յուլիսի 2002ին, եւ անիւնը պիտի փոխադրուի Երուսաղեմ:

Օգոստոս 3ին Հոգեհանգստեան պաշտամունքը պիտի կատարենք Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ:

Գերշ. Տ. Հմայեակ Եպս. Ինդոյեան, աւագանի անունով Ազատ, ծնած է 1908ին Քղի քաղաքի Ապողմակ գիւղը: Ապրիլեան եղեռնին կորսնցուցած է իր ծնողները, եւ որքանալով պատսպարան գտած է Մալաթիոյ, Սեբաստիոյ եւ Կորնթոսի ամերիկեան Նիր Իսթ Րիլիֆի որբանոցներուն մէջ:

1927 թուականին ընդունուած է Ժառանգաւորաց Վարժարանը: 1933 թուականին Սարկաւագ է ձեռնադրուած եւ 1936ին կուսակրօն քահանայ՝ ձեռնադրւած Թորգոմ Պատրիարք Գուշակեանի:

Երուսաղեմի հայոց վանքին մէջ վարած է պատասխանատու պաշտօններ, դասաւանդած է Ժառանգաւորաց Վարժարանի եւ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի մէջ:

1945-1968 թուականներուն հոգեւոր հովիւի պաշտօններ վարած է Գանատայի եւ Հիւսիսային Ամերիկայի գանազան շրջաններուն մէջ: Եղած է Ամերիկայի Արեւելեան Թեմի Թեմական Խորհուրդի անդամ եւ ատենապետ:

1974ին Եպիսկոպոս կը ձեռնադրուի Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ՝ երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ:

Վախճանեալ Հմայեակ Եպս. Ինդոյեան հրատարակած է գիրքեր եւ աշխատակցած հայկական գանազան ամսաթերթերու եւ պարբերականներու:

«Յիշեա՛, Տէր, զհոգի ծառայի եւ պաշտօնէի Եկեղեցւոյ Քո սրբոյ,
ի լոյս երեսաց Քոց:»

Սիրոյ Ողջունիւ
Թորգոմ Արք. Մանուկեան
Հայ Պատրիարք Երուսաղեմի

ՓՈՍՏԱՐԿՂ 14235 ՀԵՌԱՉԱՅՆ 6264866 ՃԱՐՍ 6264862 ԵՐՈՒՍԱԴԵՍ ԻՍՐԱԷԼ
P.O.BOX 14235 PHONE: 6264866 FAX: 6264862 JERUSALEM ISRAEL